



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

26 ՄԱՐՏԻ, 2018 թ.  
№ 4 (1021)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին  
երկաթաթաթերթ • հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԼՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

Մանկավարժական համալսարանում մարտի 14-ին տեղի ունեցավ 2018 թվականի գիտական խորհրդի նորընտիր կազմով առաջին նիստը: Օրակարգային հարցերին անցնելուց առաջ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը նախ շնորհավորեց գիտխորհրդի նոր անդամներին և մաղթեց բեղուն աշխատանք, ապա շնորհավորեց համալսարանի հոբելյարներին, մի շարք դասախոսների էլ գիտական կոչումների վկայականներ հանձնեց:

Վաստակած հանգստի անցնելու և երկարամյա աշխատանքի կապակցությամբ համալսարանի ղեկավարը «Մանկավարժական համալսարան» մեդալով պարգևատրեց ՀՊՄՀ գիտական խորհրդի քարտուղար Հասմիկ Պետրոսյանին, ով շնորհակալություն հայտնեց երկար, համատեղ աշխատանքի համար՝ փաստելով, որ Մանկավարժականը իր երկրորդ տունն է եղել:

Արդեն երկրորդ տարին է, ինչ համալսարանում անց է կացվում բանաստեղծ Ռուբեն Սևակի ան- ➤2



## Շայրնի են Ռուբեն Սևակի անվան մրցանակակիրները

Մանկավարժական համալսարանում արդեն ավանդույթ է դարձել գրող Ռուբեն Սևակի անվան ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպումը, որը հովանավորում է բանաստեղծի եղբորորդին՝ բարերար Հովհաննես Չիլինկիրյանը:

Համալսարանի գիտական խորհրդի նիստին ներկայացվեց Ռուբեն Սևակի կենսագրական, հասարակական գործունեության և գրական բարձր շերտերը բնորոշ խոհագրությունների համալսարանական 2-րդ մրցույթի արդյունքները:

Մրցույթին մասնակցել են 6 ֆակուլտետի 16, այդ թվում՝ Բանասիրական՝ 9, Սկզբնական կրթության՝ 3, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Հատուկ կրթության, Պատմության և իրավագիտության, Օտար լեզուների մեկական ուսանող և 2 աշակերտ՝ հեռակետային վարժարանից:

«Մեկ ամսվա ընթացքում կատարել ենք աշխատատար և ժամանակատար մանրակրկիտ ստուգում, հնարավորինս արժևորել, համադրել ու դասդասել եղած գրավոր աշխատանքները՝ վերլուծական, ազգային, ծանաչողական և ստեղծագործական տեսակետներից: Այս մրցույթում մեր առաջին հաջողությունը պետք է համարել երիտասարդության համընդհանուր սիրո, խանդաղատանքի մասնակցությանը և բնաբուխ վերաբերմունքը Ռուբեն Սևակ երևույթի բանաստեղծական մնայուն արժեքների նկատմամբ, ինչին էապես նպաստել է Ֆրանսիայում ապրող պատմաբան, ազգային գործիչ և բարերար, բանաստեղծի եղբորորդի Հովհաննես Չիլինկիրյանի հոգածու ձգտումը խոշորագույն անհատականությանը, մարդուն և ժողովրդին անսակարկ սիրով փարված բժշկ-բանաստեղծի՝ արդեն 21-րդ դարում արժանի հանրահռչակման խնդրում, ինչը վկայում է այս մրցանակաբաշխության բարձր հովանավորությունը:

Ներկայացված աշխատանքներից մի շարք սկզբունքներ հաշվի առնելով էլ արժանվում են առանձնացրել ենք լավագույններին», - ասաց հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սուրեն Դանիելյանը: Պրոֆեսորը մրցույթի մեջ առանձնացրեց հատկապես սուր մրցակցային բնույթը, նյութին մոտենալու և այն բացահայտելու ուսանողական բազմակողմ հետաքրքրասիրությունը:

Առաջին տեղը զբաղեցրած ուսանողուհի Աննա Սարգսյանը սովորում է Բանասիրական ֆակուլտետի ➤2

## Համո սԱՐՅԱՆ Ես հարուստ էի

Ես հարուստ էի: Ես կարող էի իմ անհատների երազանքներով զննել յոթ երկինք ու տալ թեզ նվեր: Բայց դու երկնքի կարիք չունեիր, թեզ լոկ մի կապույտ թաշկինակ էր պետք իմ կապույտ-կապույտ Արտասուքները սրբելու համար: Ես հարուստ էի: Ես կարող էի իմ վերհուշերի անհուն պաշարով զննել աշխարհի ծովերը բոլոր Ու տալ թեզ նվեր, Բայց դա ծովերի կարիք չունեիր, թեզ հարկավոր էր լոկ մի հայելի՝ Մազերիդ վրա Մատներիս մեղքը տեսնելու համար: Ես հարուստ էի: Ես կարող էի Անվերջանալի իմ կորուստներով զննել Հարդագողն ու տալ թեզ նվեր: Դու Հարդագողի կարիք չունեիր, թեզ լոկ մի խավոտ ուղեգորգ էր պետք՝ Վրան քանդակված իմ ոտնահետքը տեսնելու համար:

Ես հարուստ էի: Ես կարող էի իմ անհատների տառապանքներով զննել յոթ աշխարհ, Հայտնի և անհայտ մայրցամաքներով, Ու տալ թեզ նվեր: Դու մայրցամաքի կարիք չունեիր, թեզ մի ածու էր հարկավոր միայն իմ ցանած հերկը տեսնելու համար: Ես հարուստ էի: Ես կարող էի իմ անհատների հղացումներով զննել յոթ հազար հավիտենություն Ու տալ թեզ նվեր: Բայց դու, հիրավի, Հավիտենության կարիք չունեիր, թեզ մի մեղրամիս, մի մեղրատարի Եվ մի արծաթե հարսանիք էր պետք, Քո բախտի վրա և ուսիդ վրա իմ հասնող ծեռքը տեսնելու համար: Ես հարուստ էի: Եվ թվում էր, թե Ինձանից հարուստն աշխարհում չկա Ու չի լինելու: Բայց դու ինձանից հարուստ դուրս եկար, Դու, անհատների իմ հարստություն:



ԳԱՐՈՒՆԸ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ



# ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

➤ 1 վան մրցանակաբաշխությունը, որի հովանավորը բարերար, բանաստեղծի եղբորորդի Հովհաննես Չիլինկիրյանն է: Մրցանակաբաշխության արդյունքները ներկայացրեց և ամփոփեց պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը՝ մրցանակներ հանձնելով հաղթողներին՝ Աննա Սարգսյանին, Գոհար Ամալյանին, Աստղիկ Բոյաջյանին և Միլենա Բարսեղյանին:

Հաճելի արարողությունից հետո համալսարանի պրոռեկտոր Միքեյլ Մելիք-Բախչյանը ներկայացրեց զուգահեռ կրթություն ստանալու ընթացակարգը: Ե՛վ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերում ուսանողները կարող են զուգահեռ կրթություն ստանալ, չկրկնելով անցած դասընթացները և ստանալով երկու մասնագիտության որակավորում:

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը վերոնշյալ որոշումն ու դրա իրականացումը համարեց կարևոր ու պատասխանատու, մինևույն ժամանակ՝ ակտուալ և հրապուրիչ դիմորդների համար՝ նկատելով, որ այն թույլ կտա աշակերտների փոքր թիվ ունեցող դպրոցներում դասավանդել երկու մասնագիտությունների գծով:

Պրակտիկայի կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանը ներկայացրեց պրակտիկայի կազմակերպման արդյունքները՝ մասնավորապես անդրադառնալով պրակտիկայի կազմակերպման մասնագիտական ու կրթական վերջնարդյունքներին, դրանց համապատասխանությանը Ռրակավորումների ազգային շրջանակին (ՈԱՀ) և պրակտիկաների համապատաս-

խանությանը թեզերի կրթական պարտադիր նպատակներին:

Ըստ ֆակուլտետների մաներկայացրեց տարբեր հիմնարկներում մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործընթացը բակավորի հիմքի վրա, փաստեց, որ մագիստրոսական պրակտիկան անցկացվում է ՀՊՄՀ-ում, մա խոսեց մանկավարժական պրակտիկայի բարելավմանն ուղղված քայլերի հաջողականության մասին՝ հենվելով ֆակուլտետներից ստացված առաջարկությունների վրա, այն է՝ պրակտիկայի կազմակերպումը շարունակական դարձնել ամբողջ տարվա համար, ուժեղացնել մեթոդական ղեկավարումն ու մշտական դարձնել արդյունքների քննարկումը, կարևորել պրակտիկայի թղթապանակի ամփոփումը, մագիստրոսներից ստեղծել մեթոդների խումբ բակավորի պրակտիկան ղեկավարելու համար և այլն:

Պրակտիկայի կենտրոնի ղեկավարը նշեց, որ ուսումնասիրվել է տարբեր երկրների առաջատար համալսարանների՝ պրակտիկայի կազմակերպման փորձը և անդրադարձավ նրանց պրակտիկայում լայնորեն կիրառվող ծանր մեթոդության, համագործակցային կրթության, նախագծային ուսուցմանը կազմակերպվող պրակտիկաներին:

Ձեկուցողն անդրադարձավ նաև պրակտիկաների կազմակերպման ուժեղ և թույլ կողմերին, հնարավորություններին ու վտանգներին, հանդես եկավ մագիստրոսական պրակտիկայի բարելավմանը միտված առա-



ջարկություններով: Քննարկվող թեմայի շուրջ առաջարկություններով հանդես եկան Մ. Աստվածատրյանը, Լ. Ասատրյանը և ուրիշներ:

Հարցի առթիվ ելույթ ունեցավ համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Նա ընդգծեց, որ վերջին տարիներին համալսարանում մեծ ուշադրություն է դարձվում պրակտիկայի կազմակերպմանը բակավորի առումով, և ունենք պրակտիկայի փորձ մագիստրատուրայում: Ռեկտորը հատկապես անդրադարձավ մագիստրատուրայում պրակտիկայի կազմակերպման վերամայմանը և շեշտեց, որ այն գտնվում է խիստ անբավարար վիճակում: Նա մատնանշեց, որ մագիստրոսական կրթությունը Հայաստանում դեռևս չի համապատասխանում իր եռլայնի ինչպես արևմուտքում է, ընդգ-

ծեց, որ բակավորում սովորող ուսանողների պրակտիկան պետք է կազմակերպել գիտամանկավարժական հաստատություններում, իսկ այլ բուհերից մանկավարժական համալսարանի մագիստրատուրայում սովորող ուսանողների պրակտիկան պարտադիր պետք է կազմակերպել մանկավարժական հաստատություններում, քանի որ նրանք չունեն մանկավարժական կրթության բազա, մինչդեռ ստանալու են մանկավարժ մագիստրոսի որակավորում: Միաժամանակ պետք է խստացնել մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը և լինել սկզբունքային՝ բացառելով արտագրությունները:

Օրակարգում նաև ընտրություններ էին: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աշոտ Գալստյանը ներկայացրեց ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների, ինչ-

պես նաև պրոֆեսորի և դոցենտի կոչման ներկայացվածների քվեարկության արդյունքները: Փակ գաղտնի քվեարկությամբ Կերպարվեստի ամբիոնի վարիչ ընտրվեց Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղանյանը, իսկ Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը, մի շարք դասախոսներ էլ ներկայացվեցին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների:

Ֆակուլտետների ղեկանները ուսանողներ Միշա Թադևոսյանին, Անժելա Գաբրիելյանին, Էլյա Խաչատրյանին, Լիլիթ Ղալեյանին և Նարինե Քալանթարյանին ներկայացրին անվանական կրթաթոշակների հաստատման:

## Շայրնի են Ռուբեն Սևակի անվան մրցանակակիրները

➤ 1 մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Նա իր աշխատանքում վերլուծել է Ռուբեն Սևակ մարդու և հայրենասերի անհատականությունը, իրականացրել համադրական վերլուծություն՝ ճանաչողական զուգահեռներ անցկացնելով ժամանակի հայ բանաստեղծական հսկաների հետ:

«Այս մրցույթն ինձ հնարավորություն ընձեռեց ևս մեկ անգամ առնչվել Ռուբեն Սևակի ստեղծագործություններին, արտահայտել իմ խոսքն ու մտորումները: Ուսումնառության ընթացքում Ռուբեն Սևակի ստեղծագործություններին, բնականաբար, ծանոթ էի, սակայն աշխատանքիս մեջ

անդրադարձել եմ գրողի առավել քիչ ուսումնասիրված ստեղծագործություններին:

Հաճելի է, երբ աշխատանքը գնահատվում է, այն խթանում է հետազայում առավել շատ աշխատելու ցանկությունը», - ասաց Աննա Սարգսյանը:

Երկրորդ հորիզոնականում մրցանակ շնորհվեց երկու մասնակցի՝ Օտար Լեզուների ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Գոհար Ամալյանին և Բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Բոյաջյանին: Ա. Բոյաջյանը նշեց, որ Սևակի ստեղծագործություններին ծանոթացել է հենց համալսարանում ուսանելու տա-

րիներին:

«Ինձ համար շատ հետաքրքիր էին Ռուբեն Սևակ գրողն ու նրա ներաշխարհը: Ես անդրադարձել եմ գրողի սիրերգությանը, թե ինչպես մարդ կարող է ապրել կոտորածի ահասարսուռ ժամանակաշրջանում և այդպես գեղեցիկ ու մեղմ նկարագրել իր սերը: Աշխատանքս կատարելիս մտածում էի՝ զուցե արժանանա մրցանակի, կար ներքին մի հավատ, իսկ այսօր ուրախ եմ, որ այն իրականացավ: Նման մրցանակներն ինձ խրախուսում են և նպաստում այլ գիտական աշխատանքներ կատարելուն», - ասաց Աստղիկը:

Հատուկ խրախուսական

մրցանակ տրվեց ՀՊՄՀ հեռակետային վարժարանի հունամիտար հոսքի 11-դասարանի աշակերտուհի Միլենա Բարսեղյանին: Միլենան, ի տարբերություն ուսանողուհիների, Ռուբեն Սևակի ստեղծագործություններին ծանոթացել է այն ժամանակ, երբ տեղեկացել է մրցույթի մասին, սակայն կարճ ժամանակահատվածում սիրահարվել է գրողի ստեղծագործություններին՝ հատկապես բանաստեղծություններին:

«Աշխատանքիս մեջ անդրադարձել եմ հեթանոսության և քրիստոնեության հակադրություններին, վերլուծել եմ համամարդկային արժեքներն ու հեղինակի անդրադարձը

ցեղասպանության թեմային: Շնորհակալ եմ և ուրախ, որ վարժարանը ևս ընդգրկվեց այս մրցույթում, քանզի նման մրցույթները մեզ հնարավորություն են ընձեռում դպրոցական տարիքում արտահայտել մեր մտքերը և հանդես գալ վերլուծություններով: Իսկ գնահատանքն ամեն գործում ուժ է տալիս և ստիպում ավելի ակտիվ զբաղվել քո սիրած գործով, աշխատել և սովորել», - ասաց Միլենան:

Ռուբեն Սևակի անվան մրցանակակիրների՝ բանաստեղծի գրական ժառանգության ու ներաշխարհի մոտենալու հետաքրքիր մոտեցումները գնահատվեց դրամական պարգևներով:

**- Մի փոքր կյանք մե՞ք Ձեր մասին:**

- Սահակյան Անի: 38 տարեկան եմ: Ավարտել եմ Երևանի պետական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետը: Մասնագիտացումս իսպաներեն լեզվի գծով է, իմ ուսումնասիրած երկրորդ լեզուն անգլերենն է: Ավարտել եմ ԵՊՀ-ի բակալավի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը, 2002 թվականից իսպաներեն եմ դասավանդում Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետում: 2014-ից միաժամանակ աշխատում եմ գիտության գծով դեկանի տեղակալ:

**- Միրո՞վ եք մտնում լսարան, ասել է թե՛ սիրո՞ւմ եք Ձեր մասնագիտությունը: Ինչպիսի՞ն է մեր ուսանողների վերաբերմունքը իսպաներենի և, առհասարակ, օտար լեզուների հանդեպ:**

- Փոքր տարիքում, երբ մանկական խաղեր էինք խաղում, ես միշտ ուսուցչի դերն էի ստանձնում, կարող եմ ասել, որ մանկուց սիրել եմ մանկավարժի մասնագիտությունը: Բայց իսպաներենն ընտրել եմ պատահականությամբ, դիմում-հայտի մեջ լրացրի մաթ իսպաներենը և այնպես ստացվեց, որ երջանիկ պատահականությամբ ընդունվեցի հենց այդ մասնագիտացմամբ բաժինը, որի համար շատ ուրախ եմ: Սիրով ու մեծ հաճույքով եմ սովորել, երախտապարտ եմ ԵՊՀ-ի իմ բոլոր դասախոսներին: Ստացածս գիտելիքներն ու փորձը և սերս առարկայի հանդեպ այսօր արդեն փոխանցում եմ երիտասարդ սերնդին:

Կարծում եմ ուսանողները սիրում են իսպաներեն լեզուն, դրան օգնում է ինչ-որ չափով ծանոթությունն



Անի ՍԱՀԱԿՅԱՆ. ԳՊՄՅ Օտար լեզուների ֆակուլտետի դեկանի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

# «ԿՈՒՉԵՒ ԿԱՆԱՆՑ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸԱՄԸՆԿՆԵՒՆ», - ասում է Անի ՍԱՀԱԿՅԱՆԸ

իսպանական մշակույթի գունեղ ու տաք երանգներին: Ճիշտ է, քերականությունը մի քիչ բարդ, է և ուսանողները դժվարանում են մտապահել, բայց իսպաներենն ավելի հեշտ է գերմաներենի և ֆրանսերենի համեմատությամբ: Այնուամենայնիվ, կարծում եմ լեզվի հանդեպ պահանջարկը կա, ինչը ձևավորվում է իսպանական կրակոտ մշակույթի ազդեցությամբ:

**- Եթե հաշվի չառնենք այն հանգամանքը, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանում մարդիկ տուրք են տալիս լեզուների նորածնությանը՝ ինչ-որ ժամանակահատվածում դրանք դառնում են մոդայիկ կամ ոչ մոդայիկ:**

- Այո, կարծում եմ պետք է ընտրել այն լեզուները, որոնք քեզ համար կիրառելի են: Ի տարբերություն գերմաներեն լեզվի, որը տարբեր ծրագրերում ուսանողներին ներգրավելու հնարավորություն է ընձեռում, իսպաներենը չունի այդ հնարավորությունը և կարող է միայն իր գրավչությամբ հետաքրքրություն առաջացնել: Թեև իսպաներեն լեզվով խոսում են աշխարհի 28 երկրում և դժվար է մրցել այսօր ամբողջ աշխարհում օգտագործող անգլերենի հետ, այնուամենայնիվ, այն գեղեցիկ ու հմայիչ է և դրա մեջ է նրա հանդեպ հետաքրքրությունն ու գրավչությունը:

**- Երիտասարդ դասախոսն ի՞նչ խնդիրներ կարող է ունենալ գործընկերների կամ ուսանողների հետ:**

- Երբ դասախոսը շատ է երիտասարդ, ուսանողները երբեմն կարող են ավելի ինքնավստահ լինել և դասախոսին համարել իրենց ավագ ընկերը... Բայց եթե նրանք չափի մեջ են, ու դա չի վնասում ուսման գործընթացին, ինչու չէ, կարելի է և դասախոսին որպես ավագ ընկերոջ վերաբերվել:

**- Իսկ ինչպիսի՞ն է այսօրվա սերունդը. ի՞նչ առավելություններ ու թերություններ ունի:**

- Այս սերունդը իմ տեսանկյունից շատ պրագմատիկ է և կարծես սպառողի կարգավիճակում լինի. այս պահին ինչն է իր համար օգտակար է՝ կարող է վերցնել: Այս դարի համար գուցե դա վատ չի, նրանք և՛ գիտելիքները, և՛ արժեքային համակարգը հարմարեցնում են իրենց և ժամանակաշրջա-

նին... Դա թերևս ժամանակի թելադրանքն է... Իմ սերունդն, այնուամենայնիվ, այդպիսին չէր:

**- Ի՞նչ կառաջարկեիք բուհական բարեփոխումների շրջանակում:**

- Կուզեի ուսումնական ծրագրերով ուսանողների փոխանակումներն ավելի շատ լինեին, որ ուսանողը տեսներ, թե տարբեր երկրներում ինչ վերաբերմունք կա կրթության նկատմամբ: Որ վերանար սպառողական մտածողությունը՝ եթե վճարել եմ, այսպես թե այնպես կավարտեմ: Մշակութային տարբեր արժեքների փոխազդեցությունը շատ բան կարող է տալ, զարգացնել աշխարհաճանաչողությունը, բայց ուսանողը չպետք է մշտապես հույսը դնի համալսարանի վրա, մա պետք է նախաձեռնություն հանդես բերի:

**- Որպես գիտության գծով դեկանի տեղակալ՝ ի՞նչ կարծիքի եք մեր երիտասարդ ուսանողների գիտական ներուժի մասին:**

- Եթե մագիստրոսների մի փոքր մասն էլ զբաղվի գիտությամբ, դա արդեն ձեռքբերում կլինի: Պետք է հավելեմ, սակայն, որ այսօր գիտությունը գրավիչ չէ և չի կարող հրապուրել երիտասարդներին:

**- Ո՞րն է հայ կնոջ առաքելությունը, ինչպիսի՞ն պետք է լինի նա: Բնութագրեք այսօրվա հայ կնոջը, ուսանողուհուն:**

- Հայ կինը պետք է պահպանի ավանդաբար փոխանցված արժեքները՝ ընտանիքը համարելով ազգի ամենակարևոր հենարանը: Հայ կնոջ տեղը իր ամուսնու և երեխայի կողքին է՝ նրանց մասին ամենօրյա հոգածությամբ, բայց նա չպետք է մոռանա իր անձի մասին. կինը բավարարված է, երբ կարողանում է ինքնաիրացվել թե՛ տանը, թե՛ աշխատավայրում: Միաժամանակ ներկա դարի մարտահրավերների համապատկերում նա պետք է կարողանա գտնել իր տեղը:

Միգուցե մեր ֆակուլտետի ուսանողները փոքր-ինչ տարբերվում են իրենց ազատ մտածողությամբ, ինչը թերևս պայմանավորված է օտարերկրյա մշակույթների ազդեցությունը կրելու հանգամանքով, բայց կոռեկտ են, դա սահմաններից դուրս ազատությունը չի:

**- Ինչպե՞ս եք վերաբերվում կանանց միամսյակին, մի՞թե տոներ են պետք կանանց մեծարելու կամ գնահատելու համար:**

- Մի կողմից ճիշտ է, որ ամբողջ տարին կնոջը պետք է մեծարել, մյուս կողմից՝ դա դառնում է սովորական, կնոջը երբեմն պետք են տոներ՝ իրենց հանդեպ վերաբերմունքի և ուշադրության հատուկ օրեր:

**- Մեր հասարակության մեջ օրեցօր ավելանում են «գեներային» մտածողությամբ կանայք. դա կօգնի՞ մեր քաղաքացիական հասարակության կայացմանը, թե՞ եվրոպական կապկումները մեր մենթալիտետին հարմարեցնելն անհնաստ է:**

- Եթե գեներային հավասարությունը դիտարկում ենք ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ դա մեր փոքր ազգին պետք չէ, եթե ընտանիքում կինը հավանում է՝ դա կօգնի նրան՝ հասկանալու, որ ամուսինները հավասար իրավունքներ ունեն, որ ինքը ամուսնու հպատակը չէ: Բայց ես համոզված եմ, որ տղամարդիկ ավելի խելոք են, ավելի ճկուն, իսկ կինն ստեղծված է կին լինելու համար: Նա բարի է, և երկուսի հատկանիշները ինչ-որ տեղ իրար հավասարակշռում են: Իսկ եթե ավելի անկեղծ խոսենք Հայաստանում կին առաջնորդների մասին՝ դա այնքան էլ այդպես չէ. հայ տղամարդը շարունակում է մնալ գլխավորը, Հայաստանում տղամարդու գերիշխանություն կա:

**- Ո՞րն է Ձեր սիրած գրադնունքը: Նախասիրություններ ունե՞ք:**

- Սիրում եմ ընտանիքիս հետ անցկացնել աշխատանքից դուրս իմ ժամանակը, մա սիրում եմ ընթերցել օտարերկրյա գրականություն: Եվ փորձում եմ այնպես անել, որ դա հայոց լեզվի հաշվին չլինի:

**- Ի՞նչ եք սիրում ամենից շատ և ի՞նչն եք ատում:**

- Սիրում եմ ընտանիքս, ատում եմ կեղծիքի յուրաքանչյուր դրսևորում:

**- Ձեր ցանկություններն ու երազանքներն իրականացել են:**

- Մի մասն, այո, իրականացել է, բայց դեռ չիրականացրած երազանքներ ունեմ... Ուզում եմ այցելել մի քանի մախընտրած երկրներ, մա ամուսնուս հետ բարեկեցիկ կյանք ապահովել մեր երեխայի՝ Լևոնիկի համար:

**- Ինչի՞նչ եք հավատում կյանքում և ո՞ւմ չեք կարող վստահել:**

- Հավատում եմ բարությանը, թեև մտածում եմ, որ այն մի քիչ պակասում է... Չեմ կարող վստահել մի մարդու, ով արդեն կորցրել է վստահությունն իր հանդեպ:

**- Ի՞նչ կմաղթեիք կանանց գարնանային տոների առթիվ:**

- Գարնանային տոների առթիվ կմաղթեի, որ բոլոր կանանց ցանկություններն ու հնարավորությունները հանրակենսակրթական, որ նրանք համոզված լինեն, որ իրենք կարևոր են ընտանիքում և, ինչու չէ, մա աշխատավայրում, որը մույնպես ընտանիք է... Հանգստյան օրերին ես միշտ կարոտում եմ իմ աշխատավայրը:

**- Ուրիշ ինչի՞ մասին կուզեիր խոսել...**

- Ուսանողների... Լավ կլինի, որ նրանք հավատան իրենց ընտրած մասնագիտությանն ու կոչմանը, որը մա հոգու կանչ է և նվիրում, իսկ եթե սխալվել են, գոնե շուտ կողմնորոշվեն և մագիստրատուրայում ընտրեն մեկ այլ մասնագիտություն, որին կարող են և պետք է նվիրվեն ողջ կյանքի ընթացքում:



### ԱՇՈՏ ԵՐԵՄԻ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ



Ներկայացրեց ինձ և իր ծառայությունն առաջարկեց՝ մեր հաղորդակցմանը նպաստելու համար: Ծեր կինը նրան ինչ-որ բան պատասխանեց, ապա դառնալով իմ կողմը՝ մաքուր արևմտահայերենով ասաց:

- Ես կխոսիմ հայերեն, կկարծեմ՝ թարգմանչի կարիք չունիմ:

Եվ այսպես սկսվեց իմ գրույցը տիկին Յանսենի ու նրա քրոջ աղջկա միջև: Երբ ես հաղորդեցի տիկին Աստղիկի և նրա ամուսնու՝ Կարապետի հղած ողջույններն ու բարեմաղթությունները, նրա աչքերում արցունքներ երևացին՝ իր որդիների կարոտի ու բաժանման իրական արտահայտությունները: Եվ նա պատմեց տխուր, բայց նույնքան էլ ուրախ պատ-

## ՀԱՅ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԴԱՆԻԱՑԻ ԾՆՈՂՆԵՐԸ

1967 թվականի մայիսի 2-ին մեկնում էի Մոսկվա՝ այնտեղից Դանիա թռչելու համար: Գանապարհորդությունը կազմակերպել էր սովետա-դանիական ընկերությունը: Մոտենում էր մեկնելու ժամը: Տղաս, որ դրսում դեռ խաղում էր, ընկերներից ասում է իմ Դանիա մեկնելու մասին: Տղաներից մեկը՝ Յոզիկը, որ այսօր էլ մեր հարևանն է ու տղայիս ընկերը, վազում է տուն և մորը հաղորդում իմ Դանիա մեկնելու մասին: Քիչ անց արցունքն աչքերից՝ եկավ մայրը՝ տիկին Աստղիկը:

- Ընկեր Աշոտ, իմ մայրը Դանիայում է ապրում, և մենք վաղուց նրանից նամակ չունենք: Արդյոք չե՞ք կարող տեսնել նրան և մեզանից տեղեկություններ հաղորդել...

Ես խոստացա և, վերցնելով հասցեն, մեկնեցի՝ վստահ, որ դա առանձին դժվարության հետ կապված չէ:

Դանիայում դիմեցի դանիա-սովետական ընկերության նախագահին՝ խնդրելով օգնել ինձ գտնելու Յանսեններին: Նա նայեց հասցեին և ծիծաղելով ասաց, որ այդ ազգանունը Դանիայում ամենատարածվածն է: Չգրեթե երեք մարդուց մեկը Յանսեն է: Նույնպիսի անորոշություն կար նաև բնակավայրի հարցում: Ասաց, որ այդ որոնումը գրեթե անարդյունք կլինի, սակայն ինքը կփորձի օգտակար լինել...

Անցան օրեր, ես հույսս կորցրեցի և մոռացա Յանսենների մասին: Արդեն Օրխուսում էինք, երբ մի առավոտ հյուրանոցի աշխատողը մոտեցավ և ասաց, որ ինձ մարդիկ են սպասում:

Թարգմանչուհու հետ մոտեցանք ինձ հարցնողներին. երկու կանայք էին տարեց և երիտասարդ: Թարգմանչուհին

մոտությունը իր հայ զավակների, անցած-գնացած օրերի, նրանց հետ հաղթահարած ծանր դժվարությունների ու երջանիկ պահերի մասին:

«Մեծ եղեռնի ծանր օրերն էին, - պատմեց տիկին Յանսենը. - եվրոպական մամուլը հեղեղված էր անհավատալի դաժան և անմարդկային հաղորդումներով ու սահմանելուցիչ պատմություններով. ազատ աշխարհի մեծ պետությունների աչքի առջև թուրքերը սրախողտող էին ամուսնի ամբողջ ժողովուրդ... Իրարամերժ ու հակասական այդ հաղորդումների քաոսի մեջ պարզ լսվում էր մորթվող ժողովրդի հուսահատական և ողբալից կանչը, օգնության աղերսանքը, որը հապաղում էր:

Ամուսինս՝ Անդրեյը, մի օր ինձ առաջարկեց վերցնել մեր բոլոր խնայողությունները և մեկնել Արևելք՝ կռվին և ողբերգությանն ընդառաջ՝ մանուկ հոգիները փրկելու: Մենք սկսեցինք լուրջ պատրաստություններ տեսնել, օգնություն խնդրել մեր բարեկամներից ու ծանոթներից, նաև ամծանոթ մարդկանցից, որոնք հոժարությամբ անվերադարձ օգնություն ցույց տվեցին մեզ: Եվ երբ ամեն ինչ պատրաստ էր, մեկնեցինք Յուրախան: Այստեղ էին փախստականները՝ մազապուրծ եղած հայերը՝ վշտի, կարիքի ու ծանր աղքատության մեջ: Ահա նրանց էլ մենք որոշեցինք օգնել: Սակայն հենց այստեղ վշտին ընդառաջ էլ ծագեց հիմնական գաղափարը՝ մանկատուն հիմնելու վերաբերյալ:

Փնտրեցինք ու գտանք մի հարմար տուն, վարձակալեցինք այն, կահ-կարասի գնեցինք և, երբ որոշակի գործ արդեն

արված էր, սկսեցինք փողոցից հավաքել անտեր ու անխնամ երեխաներին: Նրանց լողացնում, մաքրում, հագցնում և ըստ առանձին սենյակների՝ տեղավորում էինք մեր ձեռք բերած շենքում, մեր անմիջական հոգածության ու հսկողության տակ: Շուտով մենք լավ օգնականներ ունեցանք՝ համեմատաբար ավելի մեծ երեխաներից, ովքեր սիրով մասնակցում էին մաքրության կազմակերպմանը, կերակուր պատրաստելուն, իսկ ավելի ուշ՝ նաև ուսուցմանը:

Մի քանի տարի մենք մնացինք Սալոնիկում, մինչև որ մեր երեխաները մեծացան, թևեր առան ու թռան աշխարհի տարբեր կողմերը՝ իրենց գտնված հարազատների ու ազգականների, պարզապես իրենց ազգակիցների մոտ: Մնացին ամենափոքրերը՝ Աստղիկն ու Յակոբը, որոնց որոշեցինք որդեգրել և մեզ հետ տանել Դանիա:



Անդրեյը գնացքի տոմսեր գնեց, պատրաստվում էինք երկար ճանապարհորդության և մի առավոտ գնացք բարձրացանք: Տեսնեմ Աստղիկը հոնգուր-հոնգուր լաց է լինում: Չեսաքրքրվեցի. պարզվեց, որ նա սիրում է մեր մախկին սաներից մեկին՝ Կարապետին, ով մի հայ կոշկակարի մոտ աշխատանքի էր անցել, և չի ուզում նրանից բաժանվել: Տոմսերը ետ վերադարձրինք, Կարապետին ու Աստղիկին ամուսնացրինք և նոր բռնեցինք վերադարձի ճանապարհը:

Յակոբի մասին տրված իմ հարցին նա այսպես պատասխանեց.

«Աստված հայ որբերի նկատմամբ իմ գործած բարությունը հազարապատիկ վարձատրեց: Յակոբը օրինավոր տղա դարձավ ինձ համար. ճիշտ է, ամուսնալուծվել է, որը չի կարող Աստծո հավանությանն արժանանալ, բայց շատ ծնողատեր, օրինապահ, բարեխղճ ու լավ մարդ է: Յանսենը և գալիս ինձ այցելության, օգնում է, սիրում ու հարգում է ինձ. թող Աստված նրան առողջություն ու հաջողություն տա...»:

Իմ այն հարցին, թե անցած երկար ու ծիգ տարիների ընթացքում նա ինչպե՞ս է պահել հայերենի իր իմացությունը, տիկին Յանսենը պատասխանեց.

«Չայերենը սովորել եմ իմ հայ զավակներից, որոնց հետ ես պետք է նրանց մայրենի լեզվով խոսեի, որ կարողանայի նրանց վիշտը ամոքել, ցավերը փարատել, ձեռք բերել նրանց վստահությունը: Իսկ կարդալ և գրել սովորեցի հայ վարժուհուց, որին հրավիրել էինք երեխաներին սովորեցնելու: Առանց որևէ վարձատրության՝ ծառայում էր իր ազգի զավակներին՝ նրանց հետ բաժանելով բոլոր դժվարություններն ու դառնությունները...»

Արդեն շատ վաղուց ես հայ մարդ չեմ տեսել՝ նրա հետ հայերեն խոսելու համար, Աստղիկին գրածս նամակները հետզհետե թվով ու ծավալով պակասում են, սակայն հայերենը չեմ մոռանում, չեմ ուզում մոռանալ, որովհետև Աստծո հետ ուզում եմ այդ դժբախտ ժողովրդի լեզվով հաղորդակցվել, այն աշխարհում իմ որդիների և դուստրերի հետ իրենց լեզվով խոսել, դրա համար ես Ավետարանը կարդում եմ հայերեն: Յանսենը և պատահել, որ եկեղեցում քահանան զարմանքով մայել է իմ ձեռքի գրքին ու հարցրել, թե ի՞նչ գիրք է, ու ես հպարտությամբ պատասխանել եմ, որ այն հայերեն Ավետարանն է՝ աշխարհի ամենահին Ավետարաններից մեկը»:

Այսպես ես ծանոթացա հայ որբուկների դանիացի մայրիկի հետ, ով երեխաներից սովորած հայերենը չմոռանալու համար տասնամյակներ շարունակ՝ մենախոսության մեջ կամ Աստծո հետ խոսելիս, կարդացել է հայերեն Ավետարանը, լսել է իր հայերեն ծայրը, որ լեզուն հետ չվարժվի հայերեն բառերն արտասանելուց և ականջը չխլանա հայերեն հնչյունների նկատմամբ: Եվ Ավետարանը նրան «հայ է պահել»...

Տիկին Յանսենն ինձ տվեց իր ամուսնու նկարը երեխաների հետ, որոնցից ամեն մեկին նա առանձին-առանձին անվանում էր՝ խոսքը քնքշացնելով, կարծես մտովի հանդիպելով իր երբեմնի որդիների հետ, ովքեր թևեր առած՝ թռել, հեռացել էին իրենց բնից և այժմ թևածուլ էին աշխարհով մեկ...»

Ամբողջ ընթացքում անհուն երախտագիտությամբ մայրում էի ծերությունից ցամաքած այդ կնոջը, հետո ծուկի իջա նրա առաջ ու համբուրեցի հոգատար ձեռքերը, որոնք այնքան խնամք ու զուրգուրանք էին տվել անապաստան հայ երեխաներին՝ նրանց ազատելով կործանումից:

Չավերժ հանգստություն տեր և տիկին Յանսենների տանջված ոսկորներին և ամենահման շնորհակալություն նրանց՝ Մեծ հոգու համար...

## Վերապատրաստումներ՝ անգլերենի ուսուցիչների համար

Մանկավարժական համալսարանի օտար լեզուների ուսուցման ամբիոնի դասախոս Այա Տոնոյանի և ռոմանագերմանական լեզուների ամբիոնի ասիստենտ Ռուզաննա Ասատրյանի մասնակցությամբ բուհում անցկացվում են օտար լեզուների ուսուցիչների վերապատրաստումներ:

ԱՄՆ-ի դեսպանության հովանավորությամբ գործող AELTA միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ անցկացվող թրեյնինգների արդյունքում ՀԴՄՀ դասախոսները կստանան թրեյնինգներ կազմակերպելու իրավունք:

Օտար լեզուների ուսուցման ամբիոնի վարիչ Անահիտ Լալաբեգյանը վստահեցրեց, որ միջազգային կազմակերպությունների անդամ լինելն ու նման վերապատրաստումներ անցկացնելը նպաստում են օտար լեզուների դասավանդման որակի բարձրացմանը

ու փորձի փոխանակմանը:

«Այս դասընթացն ուսուցանում է, թե ինչպես ուսանողին կամ աշակերտին սովորեցնել մտածել, կատարել վերլուծություններ ու հետևություններ: Հանրապետության տարբեր շրջանների ուսուցիչները հնարավորություն են ունենում կապեր հաստատել միմյանց հետ, ուսումնասիրել դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ նոր մոտեցումներ՝ դրանք իրենց աշխատանքում կիրառելու նպատակով», - ասաց Անահիտ Լալաբեգյանն ու հավելեց, որ թրեյնինգներում ներգրավել են նաև մագիստրոսներին:

Վերջինս նշեց նաև, որ սա բացառիկ հնարավորություն է՝ սերտացնելու դպրոց-բուհի համագործակցությունը, ամրապնդել անգլերեն դասավանդող ուսուցիչների փոխադարձ կապը:

Վերապատրաստող Ռուզաննա Ասատրյանն էլ հա-

վելեց, որ վերապատրաստումներին ակտիվ մասնակցում են ոչ միայն դպրոցների շուրջ 40 ուսուցիչներ, այլև Օտար լեզուների ֆակուլտետի դասախոսներ, որոնց համար նույնպես սա նոր մեթոդների ծանոթանալու լավ հնարավորություն է:

«Խմբային աշխատանքներ, նոր մեթոդների, գործիքների կիրառում, աշակերտական և ուսանողական լսարանի հետ աշխատելու հմտություններ. երկօրյա վերապատրաստումների ընթացքում դասախոսները և ուսուցիչները տեսական գիտելիքները կիրառեցին նաև գործնական աշխատանքներում», - նշեց Ռուզաննա Ասատրյանը՝ ուսուցիչների ամուսնից վստահեցնելով՝ սա փորձի փոխանակման լավագույն հնարավորություն է և տարբեր լսարաններում դասավանդելու փորձառություն:

Նշենք, որ թրեյնինգներին ներկա էին նաև AELTA միջազգային կազմակերպության ներկայացուցիչները:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ



# Հերթական վերապատրաստումը

Համալսարանում պարբերաբար իրականացվող վերապատրաստումներին այս անգամ մասնակցեց Օտար լեզուների ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների և օտար լեզուների ուսուցման ամբիոնների 16 դասախոս: 36 ժամ տևողությամբ վերապատրաստման դասընթացի ավարտին դասախոսներին հավաստագրեր հանձնեց ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:



Հանդիպման ընթացքում ռեկտորը խոսեց համալսարանի միջազգային կապերի մասին՝ նկատելով, որ օրեցօր միջազգային համագործակցությունն ընդլայնվում է, և որ այդ ոլորտում հաջողության հասնելու գրավականներից մեկը ուսանողների և դասախոսների՝ օտար լեզվի լավ իմացությունն է:

Վերապատրաստված դասախոսները շնորհակալություն հայտնեցին ռեկտորին և բուհին՝ իրենց նման հնարավորություն ընձեռելու համար: Դասախոսները խոսեցին վերապատրաստումների մասին՝ նկատելով, որ հատկապես ճիշտ էին ընտրված դասավանդվող առարկայացանկը, արհեստավարժ մասնագետները և նորարական մեթոդները:



«Դասընթացների ընթացքում մեր սովորածը կիրառեցինք հենց դասագործընթացի ընթացքում: Այս վերապատրաստումները նպաստեցին մալ դասախոսներիս՝ միմյանց հետ ավելի շատ շփվելուն, մեր փորձն ու գիտելիքներն իրար հաղորդելուն, որի արդյունքում էլ ձևավորվեց ամուր դասախոսական թիմ», - նշեցին դասախոսները:

Նրանք հանդես եկան մալ առաջարկություններով. դրանք հիմնականում վերաբերում էին վերապատրաստման դասաժամերի ավելացմանը, հոգեբանական ուղղությամբ առարկաների ժամաքանակի ավելացմանը և այլն, մալ ցանկություն հայտնեցին, որ նման մասնագիտական վերապատրաստումները կրեն պարբերական բնույթ:

Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց ներկաներին կանանց միամսյակի առթիվ և մաղթեց ամենայն բարիք ու երջանկություն:



## ԲԱՐԻ ԵՐԹ ՄԱՂԹԵՑԻՆ

Բանասիրական ֆակուլտետում ավարտական դիպլոմներ ստացավ հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական կրթական ծրագրով հայոց լեզու և գրականության մասնագիտության 3-րդ կուրսի 26 ուսանող: Կյանքի այս շրջափուլի ավարտի առթիվ շրջանավարտներին շնորհավորեցին և բարի երթ մաղթեցին ֆակուլտետի ղեկավարները և ուսանողական խորհրդի անդամները:

Ֆակուլտետի ղեկան Աշոտ Գալստյանը շրջանավարտներին հորդորեց ամենուր բարձր պահել Մանկավարժական համալսարանի վարկը՝ մաղթելով հաջողություն և կյանքի բարի ընթացք:

«Դուք մեզ փոխարինողներն եք, և ուզում եմ, որ ազգային մտածողություն սերմանեք ձեր երեխաների մեջ, ազգային հպարտություն ունեցեք և փոխանցեք սերունդներին», - շրջանավարտներին դիմեց հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դուլիսանյանը: Պրոֆեսորը հորդորեց, որ շրջանավարտները շարունակեն հարստացնել համալսարանում ստացած գիտելիքները:

Արարատ Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը Հրանտ Մաթևոսյանի խոսքերով դիմեց մագիստրոսներին՝ եթե ուսուցիչ չդառնան, գոնե իրենց երեխաներին լավ հայոց լեզու և գրականություն կսովորեցնեն:

Հայ մոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն ասաց. «Ձեր ընտրած մասնագիտությունը լավագույնն է, խնդիրը աստիճաններով բարձրանալը չէ, պետք է կարողանաք ձեր ընտանիքներում երեխաներին գրամշակութային ժառանգությունը սերմանելու առաքելությունն իրականացնել»:

Շրջանավարտներին շնորհավորեցին մալ ուսանողներ Էդգար Ապրեսյանը և Կառլոս Նազարյանը:

Ուսանողական խորհրդի նախագահ Է. Ապրեսյանը շրջանավարտներին մաղթեց, որ ձեռք բերած գիտելիքները ճիշտ օգտագործեն, իսկ Կ. Նազարյանն ասաց. «Ուսումնառության ընթացքում դուք ոգեշնչվեցիք մեր դասախոսներով, աշխատեք դուք էլ ոգեշնչեք ձեր սաներին»:

Այնուհետև կատարվեց դիպլոմների հանձնման արարողություն:

Կյանք մտան ևս 26 արժվանյալներ՝ վառ պահելու հայոց լեզվի և գրականության հավիտենական հմայքը:

## ԱՂՈՔՔԻ ԽՈՐԸՈՒՐԴԵ

«Աղոթքի գերագույն նպատակը մարդու և Աստծո մտերմությունն է, որը հնարավոր է նույնիսկ սակավաթիվ բառերով», - Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների և դասախոսների հետ հանդիպմանն ասաց Ս. Նշան քահանա Ալավերդյանը՝ մեկնաբանելով աղոթքի նպատակի, ուժի ու հավատքի կարևորությունը: Քահանան ափսոսանքով նկատեց, որ մարդկանց մեծ մասը թողել է աղոթքը՝ կարծելով, թե այն մենախոսություն է և չկա դրա պատասխանը. «Խոսում ենք հավատքից, բայց ամենաքիչն ենք մտածում այն մասին, թե ում ենք աղոթում, աղոթելիս ում ենք դիմում: Աղոթքը մենախոսություն չէ, աղոթելիս շփվում ենք

աստվածային զորության հետ»:

Ս. Նշան քահանա Ալավերդյանն անդրադարձավ մալ տարբեր կրոնների աղոթքներին և ևս մեկ անգամ ընդգծեց, որ քրիստոնեությունն առանձնանում է մի կարևորագույն սկզբունքով՝ միակն է, որ բխում է անձից:

Մեջբերելով Գրիգոր Նարեկացու խոսքը՝ նա փաստեց, որ աղոթքը հոգու շնչառությունն է, ժամադրություն Աստծո հետ, որի նպատակն է մտքով նրա հետ լինել:

Հանդիպմանը ներկա էր մալ բուհերի հոգևոր պատասխանատու Գեղամ սարկավազը, ով վստահեցրեց՝ հոգևորականների հետ նման հանդիպումները կնպաստեն, որ երիտա-

սարդներն արժևորեն աղոթքի ազդեցությունը, ներգործությունն ու կարևորությունը մարդու կյանքում:

Աղոթքի հոգեբանական ազդեցությունների և գիտական ուսումնասի-

րությունների մասին էլ ներկայացրեց հոգեբանության ամբիոնի դասախոս Նաիրա Հարությունյանը: Նա վստահեցրեց, որ աղոթքի ժամանակ մարդն ավելի լավ է իրեն կառավարում և անդրադարձավ մալ բժշկության մեջ նոր ուղղությանը՝ աղոթքի միջոցով դիստանցիոն բուժմանը:



ԵՐԵՎԵԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ

«Ժողովրդին ճիշտ հասկանալու համար պետք է հաղորդակցվել նրա արվեստին, պետք է կարողանալ զարմանալ և զարմացնել, կարողանալ տեսնել այն, ինչ տեսնում են ուրիշները և արտահայտել այն սեփական լեզվով. ահա արվեստի պատվիրաններից մեկը»:

Վարդու Շահմուրադյան



ծումների: Այդպիսի աշխատանքներից են վաղ շրջանում նկարված «Իմ նախնիները», «Ընտանիք», «Հին օրհնություն» աշխատանքները, որոնցում հեղինակը պատկերել է իր գերդաստանը՝ մեծից մինչև փոքր հայկական բնաշխարհի պատկերի վրա:

Կատարելով զանազան թեմաներով, տարբեր ժանրերի և ուղղություններին հարող, բազում տեխնիկաներով արված գրաֆիկական աշխատանքներ՝ Շահմուրադյան նկարիչը հստակեցնում է նկարելաճը և ստեղծում իր ձեռագիրը: Շահմուրադյանի արվեստում կարելի է տեսնել ռոմանտիկ-քնարական շեշտադրումներով, բանաստեղծական հուզականությամբ արված գործեր: Նրա «պատուհանների» շարքը զուգորդված է նատյուրմորտներով, որտեղ գունային թափանցիկ ու նուրբ անցում-

ՊԵՏ-Ք Է ԿԱՐՈՂԱՆԱԿ ԶԱՐՄԱՑՆԵԼ

Վարդու Շահմուրադյանը ծնվել է 1940 թ. սեպտեմբերի 2-ին Գյումրիում: 1949թ. ընտանիքը հնգամյա որդու հետ տեղափոխվում է Երևան: 1956թ. ապագա նկարիչը ընդունվում է Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան, իսկ 1961-ին՝ Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտ: Երկու տարի սովորելուց հետո՝ Վ. Շահմուրադյանն ուսումը շարունակում է Մոսկվայի գեղարվեստա-արդյունաբերական բարձրագույն ուսումնարանի մոնումենտալ դեկորատիվ գեղանկարի բաժնում: 1967-1974 թթ. նա դասավանդում է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի գեղանկարչության ամբիոնում, իսկ 1976 թվականից՝ Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: 1963 թվականից Վարդու Շահմուրադյանը մասնակցում է համամիութենական, հանրապետական ցուցահանդեսներին և 1970 թվականից դառնում է Հայաստանի նկարիչների միության անդամ:



Իմ նախնիները

Վարդու Շահմուրադյանն անտարբեր չէր ժամանակի նորարարական արվեստի հոսանքներին և ուղղություններին, որոնք եվրոպայում լայն տարածում էին ստանում: Լինելով մոնումենտալ հնչեղության գեղանկարիչ և գերազանց յուրացնելով եվրոպական արվեստի ժամանակի առկա միտումները՝ Վ. Շահմուրադյանը կարողացավ դրանք նրբորեն համատեղել հայ արվեստի ավանդական մնայուն արժեքների հետ և ստանալ ինքնատիպ համադրություն, որն ընդունելի և սիրելի դարձավ: Նկարիչն ասում էր. «Մեծ համարձակություն է պետք ինքնօրինակ լինելու համար, ստիպված եմ կռիվ տալ ինձ հետ, նախապաշարումների հետ, մշտապես տանջվում եմ երկընտրանքից...»:



Դերասանուհի

Վարդու Շահմուրադյանը մի շարք ինքնատիպ ու բազմաթանկ գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքների հեղինակ է. դիմանկարներից, թեմատիկ հորինվածքներից, գրաֆիկական թերթերից մինչև նատյուրմորտներ, որոնք հիշեցնում են կուբիստական ոճով արված գործեր: Շահմուրադյանի յուրաքանչյուր գեղանկար, գրաֆիկական ստեղծագործություն թեև չափերով մեծ չէ, սակայն համակված է մոնումենտալ հնչեղությամբ:

1960-ական թթ. գործերում ազգային, դասական և արդիական արվեստի ձևամիջոցների զուգորդմամբ նկարիչը հասել է ընդհանրացումներով հարուստ լու-

նեղը ստեղծագործություններին հաղորդում են նկարչի երևակայության անսահմանությունը՝ օբյեկտիվ իրականությունից ու առկա միջավայրից վերացարկվելու ունակությունը:

Այս աշխատանքներում ընդհանուր է պատուհանը, որը նկարված է օրվա տարբեր ժամերին: Պատուհանագոգին կամ սեղանին հանդիպում են մրգեր, ծաղկամաններ, շշեր, որոնք լուծված են գունային յուրօրինակ գույնադրումներով: Հաճախակի կարելի է տեսնել սեղանների շուրջ խնամքով դասավորված աթոռներ: Առարկաների նման դասավորությունը ստեղծում է միայնության և սպասումի տպավորություն: Իսկ այս ամենի վրա հենց նկարչի խոսքերն են. «Չուզեմալով բախվել ուրիշների կարծիքներին, որոնց երբեք էլ վերևից չեմ նայել, նախընտրում եմ միայնանալ: Սիրում եմ ներկայանալ, ներկերս, վրձիններս, նկարակալս նրանք ինձ լիքց են հաղորդում, բացում ու տարածում ինքնարտահայտման գաղտնեքներս, կարծես թե նրանց մեջ եմ հասակ առել ու երկար ժամանակ է անցել մինչև որ ընտելացել եմք միմյանց, երբ վրձինս առնում եմ ձեռքս և նայում որևէ մի ներկի, հաճույք եմ ստանում. մագնիսականության պես մի բան է դա...»:

Վարդուի թողած ժառանգության մեջ քիչ չեն մաս գրաֆիկական գործերը, որոնք մեկ անգամ ևս փաստում են գծի սահուն ու ռիթմիկ անցումներով սև ու սպիտակով գունային վառ զգացողություն ստեղծելու նկարչի վարպետության մասին («Ինքնանկար», «Մայրություն», «Աթոռներով նատյուրմորտ», «Աճաբարուհին», «Սև սկահակով նատյուրմորտ» և այլն):

Շարլ Բոդլերի արձակ պոեմների մոտիվներով կատարած նրա գրաֆիկական թերթերը, թեպետ նկարիչը



Կապույտ նատյուրմորտ

չէր նախատեսել որպես գրքի ձևավորումներ, սակայն ներառվեցին Բոդլերի 1975 թ. հրատարակված հայերեն ժողովածուի մեջ և դարձան հայկական գրքի գրաֆիկայի լավագույն մոտիվներ:

Կյանքի վերջին տարիներին Վարդու Շահմուրադյանը փորձեր է կատարել նաև քանդակագործության մեջ: Վարդու Շահմուրադյանն ապրեց ընդամենը 37 տարի: Սակայն նրա գեղանկարչական աշխատանքները և՛ որակով, և՛ քանակով խոսում են միայն այն մասին, որ գործ ունենք միանգամայն հասուն ու հստակ ձեռագիր ունեցող նկարչի հետ:

Շահմուրադյանի աշխատանքները ցուցադրվել են արտասահմանյան մի շարք երկրներում (Հոլանդիա, Հունգարիա, Արգենտինա, Ֆրանսիա, ԳՖՀ, Պորտուգալիա, ԱՄՆ, Դանիա, Բուլղարիա), այդ ստեղծագործություններից պահպանվում են Տրետյակովյան պետական պատկերասրահում, Հայաստանի ազգային պատկերասրահում, Երևանի ժամանակակից արվեստի թանգարանում, ՀՀ մշակույթի նախարարության ֆոնդում և մի շարք մասնավոր հավաքածուներում:

Լիլիթ ՍեֆՅԱՆ  
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ,  
արվեստի պատմ., տես. և կառավարում բաժին,  
մագիստրատուրայի 2-րդ կուրս

Մարդասիրության և համերաշխության արժեքների ներքո



Մանկավարժական համալսարանում էր ՀՀ ԱԳ նախարարի՝ ֆրանկոֆոնիայի հարցերով խորհրդական Վահագն Աթաբեկյանը: Նա հանդիպեց ապագա լրագրողների՝ Մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ուսանողների և ՀՊՄՀ-ի հեռակետային վարժարանի լրագրության հոսքի աշակերտների հետ:

Վահագն Աթաբեկյանը հանգամանորեն խոսեց Հայաստանում հուլիսի 11-12-ն անցկացվելիք Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XVII-րդ զագաթնաժողովի և նրա նախապատրաստական աշխատանքների մասին: Բանախոսը նշեց, որ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը (ՖՄԿ/Organisation Internationale de la Francophonie) ֆրանսերենի և հանրնդհանուր արժեքների ամրագրման և տարածման միջազգային հաստատություն է: Հանգամանորեն անդրադառնալով 2018թ. Հայաստանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի միջազգային զագաթնաժողովին՝ Վ. Աթաբեկյանը նկատեց. «Այս զագաթնաժողովը կստիպի ողջ աշխարհին հայացքներն ուղղել դեպի Հայաստան: Սա աննախադեպ իրադարձությունն է մեր պետության համար. ոսկե հնարավորություն և բացառիկ առիթ՝ Հայաստանը աշխարհին ներկայացնելու»:

Բանախոսը ներկայանեց պատմեց, որ դեռևս 2016թ. նոյեմբերի 27-ին Անտանանարիվում (Մադագասկար) Ֆրանկոֆոնիայի XVI-րդ զագաթնաժողովը միաձայն որոշում է ընդունել 2018 թվականին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XVII-րդ զագաթնաժողովն անցկացնել Հայաստանում, խոսեց Ֆրանկոֆոնիայի XVI-րդ զագաթնաժողովի հեռանկարների մասին՝ քաղաքական, մշակութային և տնտեսական առումներով:


«Հայաստանը բացառիկ երկիր է, և հայերը բացառիկ ժողովուրդ են: Պետք է աշխարհին ցույց տանք ամենը Հայաստանի և հայ մշակույթի մասին», - ասաց Վ. Աթաբեկյանը: Վերջինն անդրադարձավ նաև զագաթնաժողովի հիմնական կարգախոսին՝ «Ապրել միասին» առաջնորդվելով համերաշխությամբ և մարդասիրական արժեքներով՝ որպես խաղաղության և բարօրության հիմք:

Անդրադառնալով Հայաստանի միջազգային հարաբերություններին՝ Վ. Աթաբեկյանը նկատեց, որ միջազգային հարաբերությունները համեմատելի են մարդկային հարաբերությունների հետ, որքան մեծ ու ջերմ է տվյալ պետության հարաբերությունները մյուսների հետ, այնքան ավելի դյուրին է հարցեր լուծելը:

ՀՀ արտգործնախարարի խորհրդականին ներկայանալով հարցեր ուղղեցին, որոնք վերաբերում էին Հայաստանի միջազգային հարաբերություններին, այսօրվա ՁԼՄ-երին, նրանց դերին ու նշանակությանը:

«Այսօր էլ կան փորձառու լրագրողներ, որոնց լսելը հաճույք է, պետք է շատ աշխատեք, որպեսզի դուք էլ լինեք այդ փորձառուների մեջ: Մամուլը խոսափող է, որի միջոցով ժողովրդի խոսքը պետք է հասցվի իշխանություններին և հակառակը», - դիմելով ապագա լրագրողներին՝ ասաց Վ. Աթաբեկյանը: Վերջում բանախոսը ներկայանեցին հորդորեց և հրավիրեց ներկա գտնվել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XVII-րդ զագաթնաժողովին և նրա շրջանակներում կազմակերպվող մի շարք ձեռնարկներին:

Հեռուստալրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը շնորհակալություն հայտնեց բանախոսին բուհում հյուրընկալվելու, հետաքրքիր և բովանդակալից զրույցի համար՝ ևս մեկ անգամ կարևորելով մեծ մեծամասշտաբ միջոցառման անցկացումը Հայաստանում:  
Սոմա ԱՐԱՍՅԱՆ



յանն ու հոգեբանությանը: Հատկանշականն այն է, որ պրոֆեսոր Յ. Միքայելյանը չի խուսափել տվյալ գիտաճյուղերում առաջացած հիմնախնդիրների արծարծումից և քննարկումից: Դա այնքան ակնառու է, որ լրացուցիչ փաստարկման հարց չի առաջանում, ավելին՝ լինելով պրոֆեսիոնալ մաթեմատիկոս, թվում է՝ իրականացրել է Գալիլեո Գալիլեյի պատգամը. այն է՝ «Բնության ոսկե գիրքը գրվում է մաթեմատիկայի լեզվով»: Այս թևավոր արտահայտությունը, եթե վերածնակերպենք սույն աշխատանքի տեսանկյունից, կարող ենք ամրել՝ պրոֆեսորի մաթեմատիկական մտածողությունը թույլ է տվել նրան ստեղծել մի յուրահատուկ աշխատանք՝ գործ, որը սկզբից մինչև

## Արժեքը արդի պահանջմունքներում

Հետխորհրդային տարիներին, կյանքի տարբեր ոլորտներում եղած դժվարություններով հանդերձ, գտնվեցին անհատներ, որոնք, անտեսելով ստեղծված վիճակը, հետևողականորեն շարժվեցին առաջ, հանրագունարի բերեցին արժեքներ, որոնց բովանդակությունն ու իմաստը որքանով որ տեսանելի և ընկալելի են այսօր, այնքանով էլ միտված են վաղվա օրվան: Այդ շերտի մտավորական-մանկավարժները կրթեցին սերունդներ՝ անկախության սերունդ թե՛ դպրոցներում, թե՛ համալսարաններում՝ պատրաստելով այսօրվա և վաղվա մանկավարժին, բժշկին, գինվորին, ի վերջո՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն: Անկախության սերունդն իր վճռական խոսքն ասաց 2016 թվականի ապրիլյան պատերազմի բախտորոշ օրերին՝ հայրենիքի պաշտպանության գործում:

Այդ մտավորական-մանկավարժները մեզ հետ են, մեր մեջ և մեր կողքին՝ հաճախ «անտես ու աննկատ», սակայն՝ գրիչը ձեռքներին և միշտ սթափ: Նրանցից է մանկավարժական գիտությունների դոկտոր, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Համլետ Միքայելյանը (արվեստաբանության գիտակցի ու գեղանկարիչը), որի փիլիսոփայական ենթատեքստով և արվեստի ավագանուն «թրծված» ու հանրությանը՝ առաջին հերթին սովորող և խորհող երիտասարդությանը ներկայացված աշխատանքը՝ «Արժեքներ և արժեքային հարաբերություններ» (Մաթեմատիկական կրթության արժեքանակն հիմունքները, մաս 1-ին) վերնագրով լույս տեսավ օրերս: Դժվարանում ենք ասել՝ ման մտահողացման նախադեպը կա՞ արդյոք. մեր իրազեկմամբ՝ ոչ: Այդ ձեռքբերումը, բնականաբար, ոչ միայն պրոֆեսոր Յ. Միքայելյանի հաջողությունն է, այլև, առավելապես, հանրապետությունում գիտակրթական բարեփոխումների առաջատարի՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ձեռքբերումը:

Հայտնի է, որ արժեքներն ուսումնասիրվում են, իմաստավորվում առաջին հերթին աքսիոլոգիայի կամ արժեքների մասին տեսության շրջանակներում՝ փիլիսոփայության մի բնագավառում, որի խնդիրները սերտորեն առնչվել են և այժմ էլ հետաքրքրում են տրամաբանությանը, գեղագիտությանը, քաղաքագիտությանը և, հատկապես, բարոյագիտությանը:

վերջ իր վրա կրում է մաթեմատիկական մտածողության ազդեցությունը, այլ կերպ՝ արժեքանությանը նվիրված սույն աշխատանքը ներծծված է մաթեմատիկական մտածողությամբ:

Սա գիտությունների փոխլրացման և փոխներթափանցման լավագույն օրինակ է՝ արվեստաբանության և գիտաբանության լրացուցչությամբ: Ժամրդ՝ գիտական աշխատանքի լրագրային ներկայացումը, թույլ չի տալիս ծավալվել, սակայն հնարավորություն է ստեղծում տալ արժեքի ընդհանուր տեսական ըմբռնումը. «Արժեքը այն է, ինչ մարդկանց զգացմունքները թելադրում են ճանաչել ամեն բանից վեր և ինչին կարելի է ձգտել, մտահայել, վերաբերվել հարգանքով, համակրանքով, պատկառանքով» (Պ. Նեմցեր): Արժեքը որևէ իրի հատկություն չէ, այլ օբյեկտի լիարժեք կեցության էությունն ու պայմանը: Ինքնին հասկանալի է, որ արժեքանության կողմից մշակված սկզբունքներն են, որ որոշում են, ուղղորդում մարդկային կենսագործունեության միտումները, մարդկանց վարքի մոտիվացիաները: Ասվածի համատեքստում կարևորվում է արժեքների քննությունն ու արժեքանակարգի ձևավորումը հատկապես ուսանողների կրթադաստիարակչական գործընթացում: Նկատենք, որ աշխատանքը կարդացվում է սահուն և դրականորեն ներգործում ուսանողի ներաշխարհի թողնելով իր դրական ազդեցությունը նրա գիտակցության հասունացման, ազգային, գեղագիտական, բարոյական և այլ համամարդկային արժեքների ձևավորման գործում:

Արժեքների ձևավորման հիմնախնդիրը, որը չափազանց կարևորվում է աշխարհի զարգացած երկրներում, այսօրինակ աշխատության շնորհիվ հիմնավորապես մուտք է գործում հայ արդի մանկավարժություն և, մեր կարծիքով, դառնալու է նրա գործող կարևորագույն բաղադրիչներից մեկը:

Այս աշխատանքը մաթեմատիկայի ուսուցման շրջանակներում լրացնելու է այն բացը, որը մինչ այժմ ըստ էության ուշադրության չի արժանացել:

**Լևոն ՇԻՐԻՆՅԱՆ**  
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Հասմիկ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ  
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի

## ՍԻՄՎՈԼԻԶՄԸ ԵՎ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Լույս է տեսել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարտին Գիլավյանի «Սիմվոլիզմը հայ պոեզիայում» գիրքը: Այն հրատարակության է երաշխավորվել ՀՀԿԲ Բանասիրական ֆակուլտետի խորհրդի կողմից, խմբագրող բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն է, գրախոսը՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Գալստյանը:

Ուսումնասիրությունը նվիրված է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի գրականության մեջ լայն տարածում գտած հոսանքներից մեկին՝ սիմվոլիզմին, որն իր դրսևորումներն ունեցավ մալ հայ պոեզիայում:

«Սիմվոլիզմը (խորհրդապաշտություն) 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի համաշխարհային գրականության մեջ ամենալայն տարածում ստացած հոսանքներից էր և իր ազդեցությունը թողեց մալ հայ բանաստեղծների ստեղծագործությունների վրա, գրքի ներածականում գրում է հեղինակը: -Սկսած 20-րդ դարասկզբից՝ սիմվոլիզմը գտնվել է հայ քննադատական մտքի ուշադրության կենտրոնում: Արտահայտվել են ամենատարբեր կարծիքներ. շատերը փորձել են ցույց տալ, որ հայ բանաստեղծները մեխանիկորեն մեր գրականություն են տեղափոխում հոսանքի արտաքին հատկանիշները, «կապկում են» ռուս և ֆրանսիացի բանաստեղծներին: Գրականագետներից ոմանք փորձել են մեր բանաստեղծներին ամեն կերպ հեռու պահել սիմվոլիզմից և միայն 1980-ականներից հետո է սիմվոլիզմը սկսել գնահատվել օբյեկտիվորեն: Չնայած այս ամենին՝ մենք դեռևս չունենք հայկական սիմվոլիզմը որպես որպես գեղագիտական համակարգ ներկայացնող ամփոփ ուսումնասիրություն:

Սույն ուսումնասիրությունը չի հավակնում լինելու այդպիսին: Այն ուսումնասիրողական ձեռնարկ է, հատկապես մագիստրոսական կրթության ուսանողների համար, ովքեր որպես առանձին դասընթաց ուսումնասիրում են նորագույն շրջանի գրական ուղղություններն ու հոսանքները»:

Ուսումնասիրությունն օգտակար կարող է լինել մալ ավագ դպրոցի ուսուցիչների և 20-րդ դարասկզբի հայ պոեզիայի հարցերով զբաղվողների համար:


Հավելենք, որ հեղինակը գրքի ողջ տպաքանակը անվճար տրամադրել է ՀՀԿԲ Բանասիրական ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին:

## ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

Հնչում են օրերը, կանչում են, Օրերը – կարմիր ու բոսոր. Օրերը դողանց ու հնչյուն են, Ձնգուն են՝ հրե ու հզոր: Ու սիրտս զնգում է, զնգում է, Թռչում է՝ կրակ է ու բոց. Լսո՞ւմ ես սրտի իմ զնգունը, Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես, թե ոչ... Կրա՞լ կա սրտիս մեջ, կրա՞լ կա, Հրդեհ է՝ վառվում է հրկեզ. ալիքը, կուզեն, որ արա՞ գա – Անդարձ է կարոտը երգիս: Կուզեն, որ կյանքի մեջ գալիք այն Երգերս զնգան ու հնչեն – Կուզեն, որ լսե, ա՛խ, գալիքը Երգերս այս վառ ու հնչեղ...  
\*\*\*

Ու վառվո՞ւմ է օրերում սիրտս, որպես ողջակեզ. Ձե՛րն հողմերում ու հրում քե՛զ եմ տեսնում հիմա ես: Փռել ես հուրդ ոսկի, վառել ես կյանքը մթար, Վառել ես սիրտս՝ խոսքի կարկաչներով արեւառ: Բա՛ց ես թողել հողմային քո մծույզները կարմիր, Որ հրդեհեն կյանքը հին ու քաղաքները մարմար: Ու թռչում են սրընթաց քո մծույզները հիմա – Քա՛ղցր է աշխարհը սրտիս, քաղցր է կյանքը, որպես մահ...  
\*\*\*

Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու՝ Երկու ճամփորդ՝ պատառոտած շորերով: Ու սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝ Անրջական կարոտներով ու սիրով: Մենք սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝ Անրջական ինչ-որ կարոտ, ինչ-որ սեր Ու սիրում ենք առավոտից իրիկուն ճամփա երթալ - ու հավիտյան երազել: Աչքերիս մեջ մենք պահել ենք երկնային ճամփաների հեռուները դյուբակալան – Ու անցնում ենք ուղիներով երկրային, Ուր քյո՛ւր մարդիկ երազեցին ու չկան:



Մշուշի պես մեր մանկությունը անցավ Գորշ, անարեւ, անմխիթար մանկություն: Ձառանցանքի պես մանկությունը անցավ – Ու հեռացանք: Ու չենք դառնա կրկին տուն: Լո՛ւռ հեռացանք ու քայլեցինք անդադրում՝ Երազելով հավերժական հեռուներ: Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում – Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր: Ու օրերում բազմագույն ու բազմազան վառվեց, վառվեց ողջակիզվող սիրտը մեր,- Բայց աչքերը մեր – արեւներ չտեսան, Եվ մեր սրտերը – լուսավոր հեռուներ: Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան Որոնեցին պատահական աչքերում Հարդագողի ուղիները ոսկեման, Նրա անծիր, անծայրածիր այն հեռուն: Բայց աչքերում նրանք երկինք չգտան, Ու սրտերում - արեգակներ ոսկեվառ: Ու բզկտվեց հայացքներից անկեմդան Որք սիրտը մեր՝ երազորեն – հոգեվար: Ես ուզեցի երգել գովքը Աստու, Երգել փառքը պայծառ սիրո ու հացի. Սիրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու – Գորշ օրերի տաղտկությունը երգեցի... Թաղված մնաց իմ աչքերում մի անհուն, Կապուտաչյա երջանկության առասպել. Մի երկնային առնչության պատմություն - Ու կարծրացավ սիրտս՝ անլույս ու անբեր: Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,- Ու խնդացին լուսավո՞ր մեր աչքերին, Բութ հեզմեցին մեր կարոտները իրկեզ – Ու հեռացան: Ու ո՛չ մի լույս չբերին: Քույրը խնդաց, բարեկամը ծիծաղեց, Օտար մարդիկ հայիոյեցին ու անցան: Միայն պոռնիկը մշուշում համբուրեց, Եվ խելագարը բարեկեց կիսածայն: Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես, Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք. - Մենք կժպտանք, գո՞հ կժպտանք մեննելիս, Որ երազում երազեցինք ու անցանք...



### Նոր ներկայացում

Մանկավարժական համալսարանի հեռուստառեժիսուրայի 3-րդ կուրսի ուսանողները Կանանց միջազգային օրվա առթիվ պատրաստել էին նոր բեմադրություն՝ «Արյունոտ հարսանիք»:

Յուրաքանչյուր ուսանողները ներկայացրին իսպանացի դրամատուրգ Ֆեդերիկո Գարսիա Լորկայի ամենահեղինակվոր պիեսներից մեկը՝ «Արյունոտ հարսանիք»-ը: Սեր, խոչընդոտներ, դավաճանություն, պատիվ, ողբերգություն... այս դրվագներով էլ ուսանողները ևս մեկ անգամ փաստեցին, որ սիրող սրտերին հնարավոր չէ բաժանել: «Դու կարծում ես ժամանակը բուժում է, ո՛չ, այն, ինչ մտնում է սիրտը, հնարավոր չէ հանել: Ժամանակն անցնում է, իսկ ցավն ավելի ու ավելի է լսվում ինձ: Մեկ ուրիշի հետ ամուսնությունը չի օգնի քեզ մոռանալ, ժամանակը չի բուժի ոչ մի վերք: Սա խելագարություն է, սիրտս տանջանքից չորացել է»,- ասում է հերոսուհին, ով փորձում է պայքարել իր սիրո համար, սակայն, ցավոք, այն ավարտվում է ողբերգությամբ:

Բեմադրության հեղինակ Արդա Յուլիանիսյանը նշեց, որ ներկայացումը շատ բարդ էր, և ուսանողները կարողացան պատվով դուրս գալ:

«Ես գոհ եմ ուսանողներից և նրանց կատարած աշխատանքից, շատ բարդ է ողջ կուրսը ներգրավել բեմադրությունում: Ստեղծագործության վրա ես երկար եմ աշխատել, բայց կուրսի հետ՝ կարճ, կարծում եմ, որ ռեժիսոր-բեմադրիչը պետք է պատրաստ գա ներկայացման», - ասաց Արդա Յուլիանիսյանը: Նա հավելեց՝ եթե ավարտելուց հետո ուսանողների կեսն էլ իր մասնագիտությամբ աշխատի, ապա կնշանակի, որ իր աշխատանքն իզուր չի անցել:



«Նրանք պետք է լավ մասնագետներ դառնան, շատ աշխատեն և գտնեն իրենց տեղը կյանքում, բուհն ամեն ինչ անում է նրանց լավ ու որակյալ կրթությամբ ապահովելու համար», - ամփոփեց պրոֆեսորը:

Մարտի 23-ին մեր ուսանողները «Արդա Արտ» թատրոնի հետ համատեղ «Արյունոտ հարսանիք»-ը ներկայացրին Երևանի տիկնիկային թատրոնի բեմում: Դահլիճը լեփ-լեցուն էր, ուսանողները հանդիսատեսին հիացրին իսպանական կուրիոսի վառ գույների մատուցմամբ և անկաշկանդ խաղով: Բեմադրիչ Արդա Յուլիանիսյանի աշխատանքը հիացմունքի արժանի դրվագներ մատուցեց:

Ներկայացման մասին իր վերաբերմունքը արտահայտեց Հասմիկյանը՝ փաստելով, որ թատրոնը կա՛, իսկ ուսանողները կարող են մրցել այլ թատերախմբերի հետ:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

### Լավագույն նկար՝ սիրո թեմայով

Մանկավարժական համալսարանի Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր «Լավագույն նկար սիրո մասին» մրցույթը:

Մրցույթին մասնակցելու հնարավորություն ունեին բուհի բոլոր ֆակուլտետների ուսանողները, որոնցից անանուն քվեարկությամբ ընտրվեցին երեք լավագույն աշխատանքները:

Արդյունքներով՝ «Լավագույն նկար սիրո մասին» մրցույթում 1-ին տեղին արժանացավ Կուլտուրայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Մարտուն Համբարձումյանը, 2-րդ տեղին՝ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Լուիզա Գաբրիելյանը, իսկ 3-րդ տեղին՝ Օտար լեզուների ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողուհի Գեղեցիկ Վանցյանը:

Հաղթողներն ստացան նվերներ և պարգևներ:



### ՕՆԼԱՅՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Օրերս ՀՊՄՀ-ի «Ա. Ս. Պուշկինի անվան ռուսերենի ուսուցման և թեստավորման կենտրոնում» բուհը և Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարանը համատեղ կազմակերպվել էին միջազգային օնլայն գիտաժողով:

«Երկրագիտություն. հայրենիքը ուսանողների աչքերով» խորագրով գիտաժողովին մասնակցում էին ուսանողներ աշխարհի 7 երկրներից՝ Հայաստանից, Ռուսաստանից, Կոտդիվուարից, Բանգլադեշից, Վիետնամից, Անտիգուա Բարբուդայից և Աֆղանստանից:

Ձեկույցներում ներկայացվեցին հետաքրքիր տեղեկություններ վերոնշյալ երկրների, տեղի մշակույթի, սովորույթների մասին: Մասնակիցները ծանոթացան տարբեր երկրների ճարտարապետական և մշակութային ժառանգությանը, միմյանց հարցեր ուղղեցին:

Կազմակերպիչները բարձր գնահատեցին ելույթներն ու զեկույցները, իսկ մասնակիցները վստահեցրեցին՝ այն արդյունավետ էր և օգտակար, քանի որ բոլորին, որպես հաղորդակցման լեզու, ևս մեկ անգամ միավորեց ռուսաց լեզուն:

### ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ՄՐՅՈՒՅԹ

Երևան քաղաքի «Արգենտինյան Հանրապետություն» թիվ 76 հիմնական դպրոցում ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի նախաձեռնությամբ մարտի 22-ին անցկացվեց իսպաներեն լեզվի մրցույթի, որին մասնակցեցին 5-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների աշակերտները:

Մրցույթը կազմակերպել էին Օտար լեզուների ֆակուլտետի գիտության գծով փոխդեկան Անի Սահակյանը, վերոհիշյալ դպրոցի ուսուցչուհի Նոնա Սարգսյանը, ֆակուլտետի ուսանողուհիներ Էլեոնորա Չուխաջյանը և Քրիստինե Տոնոյանը:

Մրցույթում ներառվել էին ինչպես երկրագիտությանը վերաբերող այնպես էլ քերականական հարցեր: Դպրոցականները մեծ ոգևորությամբ ընդունեցին նախաձեռնությունը և ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին:

Մրցույթում առաջին տեղը զբաղեցրեց Մանե Մովսեսյանը, երկրորդ տեղը՝ Դավիթ Անդրեասյանը, իսկ երրորդ տեղը՝ Աննա-Մարիա Ազիզյանը, ովքեր էլ պատվոգրեր ստացան և խրախուսական մրցանակներ՝ գրքերի տեսքով:

Օտար լեզուների ֆակուլտետը շարունակելու է այս ավանդույթը և ամեն տարի կազմակերպելու է նման միջոցառում, որը մի կողմից էլ ավելի կամրապնդի դպրոց-բուհ կապը, մյուս կողմից՝ կխթանի աշակերտների հետաքրքրությունը դեպի իսպաներեն լեզուն և մշակույթը:



Հերիքնագ ԽԱՉԻԿՅԱՆ Մեր տաղանդավոր ուսանողուհու աշխատանքները

Գրանցման վկայական՝ 01ՍՕ0184 տրված է 26.03.2008 թ. Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asrysilva@gmail.com Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը: Հասցեն՝ Արշակունյաց 2 Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար: Հանձնված է տպագրության 26.03. 2018 թ. Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ Էջաղորդը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ